ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. (010) 511-709

N ԴԴԱ-1 Հ-8649

«25» 08 2022թ.

Վարչական գործ թիվ **ՎԴ/2515/05/20**

Աշոտ Զաքարյանին
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Վայք, Շահումյան 62

Վայոց Ձորի մազրի Վայք համայնքի ղեկավարին
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Վայք, Շահումյան փողոց 18 շենք

Վայոց Ձորի մազրի Վայք համայնքի ավագանուն
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Վայք, Շահումյան փողոց 18 շենք

ՀՀ կադաստրի կոմիտեին
ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց պողոտա 7

Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի
ներկայացուցիչ Սամվել Սիմոնյանին
ՀՀ, ք.Երևան, Անդրանիկի 60 շենք, 6 բնակարան

Լևոն Ասլանյանին
ՀՀ, ք.Երևան, Անդրանիկի 60 շենք, 6 բնակարան

Ուղարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի 20.07.2022 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը:

Առդիր՝ որոշումը 6 թերթից:

Դատավորի օգնական ***Անահիտ Երվանդյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2515/05/20
Նախագահող դատավոր՝ Ա. Պողոսյան
Դատավորներ՝ Ա. Բաբայան
Կ. Մաթևոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2515/05/20**
2022թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«20» հուլիսի 2022թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ք. ՄԿՈՅԱՆ
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
Ա. ՄԻՐԶՈՅԱՆ

քննելով ըստ հայցի Աշոտ Զաքարյանի ընդդեմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի, ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ավագանու և ՀՀ կառավարության կոմիտեի, երրորդ անձինք Գրիգոր Գրիգորյանի, Լևոն Ասլանյանի, Նարեկ Նահապետյանի, Զեղեա համայնքի ղեկավարի 10.04.2015 թվականի թիվ 22 որոշումը, Զեղեա համայնքի ավագանու 11.04.2015 թվականի թիվ 14 որոշումը և 15.05.2015 թվականի հանդիսություններն անվավեր ճանաչելու և հետևանքները վերացնելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.02.2022 թվականի որոշման դեմ Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Աշոտ Զաքարյանը պահանջել է անվավեր ճանաչել Զեղեա համայնքի ղեկավարի 10.04.2015 թվականի թիվ 22 որոշումը, Զեղեա համայնքի ավագանու 11.04.2015 թվականի թիվ 14 որոշումը և 15.05.2015 թվականի աճուրդները, վերացնել հետևանքները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 06.05.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.02.2022 թվականի որոշմամբ Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.05.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 13.04.2022 թվականի որոշմամբ Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է՝ սահմանելով հնգօրյա ժամկետ վճռաբեկ բողոքի սխալը շտկելու և բողոքը կրկին բերելու համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Գրիգոր Գրիգորյանը և Նարեկ Նահապետյանը (ներկայացուցիչ Սամվել Սիմոնյան):

2. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Բողոք բերած անձինք որպես բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու հիմնավորումներ վկայակոչել են հետևյալը.

Սույն գործով հայցվորի ձեռքբերման նախապատվության իրավունքը գնահատելիս՝ քննարկման առարկա պետք է դառնային ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված վավերապայմանները, ինչը սակայն չի կատարվել (բողոքարկվող որոշումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1457/02/10 որոշմանը):

Վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտում կիրառված իրավական մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-ի հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումներին, մասնավորապես՝ թիվ 3-1311 (ՎԴ) 2007 թվականի սեպտեմբերի 5, 3-1098 (ՎԴ) 2007 թվականի հուլիսի 06, թիվ ԿԴ1/0063/02/12 18.07.2014 որոշումներին, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի, նույնն է՝ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 52-րդ հոդվածի, ներկայումս 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի կիրառելիության մասով հակասում է թիվ 3-132 (ՎԴ), թիվ ԿԴ1/0063/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին, ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի իմաստով որոշումը հակասում ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ2/0095/05/09 որոշմանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1457/02/10 որոշմանը:

Բողոք բերած անձինք որպես մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմնավորում վկայակոչել են հետևյալը.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն գործով ինչպես Դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից խախտվել են մի շարք նյութաիրավական նորմեր, ինչի հետևանքով ուղղակիորեն խախտվել են սույն գործով երրորդ անձանց՝ Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի իրավունքները և ազատությունները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձինք պահանջել են ամբողջությամբ բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 16.02.2022 թվականի որոշումը՝ Աշոտ Զաքարյանի հայցը մերժել կամ բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալ, կամ լրացուցիչ պատճառաբանել Վերաքննիչ դատարանի 16.02.2022 թվականի թերի և սխալ պատճառաբանված որոշումը:

<u>3. Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Վճռաբեկ դատարանը, քննելով վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը, և բացակայում են նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

Նկատի ունենալով, որ տվյալ դեպքում բացակայում են վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու և այն վերադարձնելու ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերը՝ Վճռաբեկ դատարանը, **քննելով օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար**

բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայության հիմքերով ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը, արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքում պետք է նշվեն նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի այն կետի առկայության մասին հիմնավորումները, որը, ըստ բողոք բերող անձի, հիմք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ (...) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը. (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոք բերած անձը որպես բողոքը վարույթ ընդունելու հիմք մատնանշել է օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար Վճռաբեկ դատարանի որոշման էական նշանակություն ունենալու հանգամանքը՝ պատճառաբանելով, որ որոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-ի հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումներին, մասնավորապես՝ թիվ 3-1311 (ՎԴ) 2007 թվականի սեպտեմբերի 5, թիվ 3-1098 (ՎԴ) 2007 թվականի հուլիսի 06, թիվ ԿԴ1/0063/02/12 որոշումներին, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-[illegible] հոդվածի 3-րդ մասի, նույնն է՝ թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ուժը [illegible] մտել 01.01.1999 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 52-րդ հոդվածի, ներկայումս 61-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի կիրառելիության մասով հակասում է թիվ 3-132 (ՎԴ), թիվ ԿԴ1/0063/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներին, ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի իմաստով որոշումը հակասում ՀՀ վճռաբեկ

դատարանի թիվ ՎԴ2/0095/05/09 որոշմանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի իմաստով հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1457/02/10 որոշմանը:

Համեմատական վերլուծության ենթարկելով բողոքարկվող դատական ակտը և ՀՀ վճռաբեկ դատարանի 05.09.2007 թվականի թիվ (ՎԴ) 3-1311, 06.07.2007 թվականի թիվ 3-1098 (ՎԴ), 18.07.2014 թվականի թիվ ԿԴ1/0063/02/12 քաղաքացիական գործով որոշումների մեջ ՀՀ քաղաքացիական օրեսգրքի 275-ի հոդվածի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը, թիվ 3-132 (ՎԴ) գործով 27.03.2008 թվականի որոշման մեջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.1999 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 52-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԷԴ/1457/02/10 որոշման մեջ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը և թիվ ՎԴ2/0095/05/09 վարչական գործով 02.04.2010 թվականի որոշման մեջ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ չի հիմնավորվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայությունը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքում ներկայացված փաստարկները բավարար չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայությունը հիմնավորված համարելու, ուստիև՝ այդ հիմքով բողոքը վարույթ ընդունելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոքը բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով, որ այդ խախտմամբ խաթարվել են արդարադատության բուն էությունը, (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Տվյալ դեպքում բողոք բերած անձինք վճռաբեկ բողոքում [illegible] բողոքը վարույթ ընդունելու հիմք մատնանշել են նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությունը՝ պատճառաբանելով, որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի խախտման մասին բողոք բերած անձանց փաստարկները մասամբ հիմնավորված

Համարելով հանդերձ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումները բավարար չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով բողոքը վարույթ ընդունելու հետևության հանգելու համար, քանի որ այդ խախտումը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ չի հանգեցրել արդարադատության բուն էության խաթարմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ բողոքում ներկայացված հիմնավորումները բավարար չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված հիմքերով բողոքը վարույթ ընդունելու հետևության հանգելու համար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 162-րդ և 172-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ՎԴ/2515/05/20 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.02.2022 թվականի որոշման դեմ Գրիգոր Գրիգորյանի և Նարեկ Նահապետյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող _____ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Զեկուցող _____ Բ. ՄԿՈՅԱՆ

_____ Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

_____ Ա. ՄԻՐԶՈՅԱՆ